Հայաստանի կենսաբ. հանդես, 4(63), 2011

ՌԱՖԱՅԵԼ ՀՈՎՍԵՓԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կյանքի 71-րդ տարում իր մահկանացուն կնքեց հիդրոէկոլոգիայի և ջրակենսաբանության բնագավառների խոշոր գիտնական, հիդրոէկոլոգիայի հայկական դպրոցի հիմնադիր, ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի բազմամյա տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ռաֆայել Հովսեփի Հովհաննիսյանը: Նա ծնվել է Երևանում, 1940 թ. մարտի 22-ին, 1964 թ-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը, 1970 թ-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1988թ-ին՝ դոկտորական ատենախոսությունները՝ Մոսկվայի պետական համալսարանում:

Սկսած 1973 թվականից, ավելի քան 33 տարի, պրոֆեսոր Ռ. Հովհաննիսյանը, ղեկավարելով Հարավային Կովկասում հիդրոէկոլոգիտական հետազոտություններ իրականացնող միակ կազմակերպության՝ Սևանի ջրակենսաբանական կայանի, այնուհետև՝ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի աշխատանքները, ակտիվորեն մասնակցել է Սևանի առջև ծառացած տարաբնույթ հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծումների որոնման գործին: Նրա դոկտորական ատենախոսությունը, որ նվիրված էր Սևանա լճի անթրոպոգեն աղտոտման և նրա բացասական հետևանքները կանխելու ուղիների բացահայտմանը, միակ ամփոփ աշխատությունն էր, որն ի մի էր բերում Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանին վերաբերող բազմամյա հետազոտությունների արդյունքները: Այն իրավամբ գիտական խոր վերլուծություն էր, որն անշուշտ հետագայում իր ավանդն ունեցավ գործնականում՝ Սևանում և նրա շրջակայքում ընթացող բազմապիսի բացասական գործընթացների մասամբ կանխման առումով: Պրոֆեսոր Ռ.Հովհաննիսյանի հետազոտությունները մատնանշեցին Սևանի հիմնախնդիրների լուծման հնարավոր լավագույն տարբերակները՝ օգտագործելով ժամանակակից մաթեմատիկական մեթոդներ, առաջադրելով կենսածին տարրերի ներհոսքը կարգավորելու ճանապարհով լճի էկոլոգիական վիճակի վերականգնման ինքնատիպ մոդելներ:

Ռաֆայել Հովհաննիսյանի նախաձեռնությամբ Հայաստանում զարգացում ապրեցին գիտական նոր ուղղություններ՝ ֆունկցիոնալ հիդրոէկոլոգիան և հիդրո-կենսաբանությունը, ինստիտուտում ստեղծվեցին մի շարք նոր լաբորատորիաներ՝ հիդրոֆիզիկայի, հիդրոքիմիայի, էկոլոգիական ֆիզիոլոգիայի, փորձարարական էկոլոգիայի, ձկնաբուծության և այլն: Պրոֆեսոր Ռ. Հովհաննիսյանի գիտական հետազոտությունների արդյունքները օգտագործվեցին Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական միջոցառումների մշակման համար, որոնք իրենց արտացոլումն են գտել ԱՊՀ և Հայաստանի Հանրապետության կառավարական և վարչական օրգանների հատուկ որոշումներում: Նրա ղեկավարությամբ հիմնադրվել է աշխարհի և Հայաստանի գետերի և լճերի ջրաբանական, ջրակենսաբանական և ջրաքիմիական տվյալների չափադարանը:

Պրոֆեսոր Ռ.Հովհաննիսյանը հեղինակ է 125 գիտական աշխատությունների, այդ թվում երկու մենագրության, որոնց գիտական ուղղվածությունը էկոլոգիական պրոցեսների հետազոտման ֆունկցիոնալ մոտեցումն է: Նրա գիտական աշխատությունները հայտնի են ոչ միայն ԱՊՀ երկրներում, այլև նրա սահմաններից դուրս: Համատեղ գիտական հետազոտություններ իրականացնելու համար նա բազմիցս հրավիրվել է արտասահման, գիտական զեկույցներով հանդես եկել Ճապոնիայում, Հունգարիայում, ԱՄՆ-ում, Սկանդինավյան երկրներում, Չինաստանում՝ ամենուր Սևանի հիմնահարցը բարձրացնելով համաշխարհային մակարդակի:

Պրոֆեսոր Ռ.Հովհաննիսյանը միշտ հատուկ ուշադրություն է դարձրել բարձրորակ մասնագետների պատրաստմանը: Նա դասավանդել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում, իր ակտիվ մասնակցությունն ունեցել ֆա-

կուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի գիտակրթական գործընթացների բարելավման գործում: Նրա շատ աշակերտներ հաջողությամբ աշխատել են Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Հնդկաստանի Գերմանիայի, Հունաստանի խոշոր գիտական կենտրոններում, յուրացրել նրանց առաջավոր փորձը՝ տեղերում պաշտպանելով թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Պրոֆեսոր Ռ.Հովհաննիսյանին բնորոշ էր նաև ակտիվ հասարակական գոր-ծունեությունը: Նա «Սևանի մասին օրենքի» նախաձեռնողն ու հեղինակն է: Նա մեծ աշխատանք է կատարել «Սևանա լճի բնական պաշարների վերականգնման, վերարտադրության և պահպանության տարեկան և համալիր ծրագրերի» իրականացման ուղղությամբ: Ռաֆայել Հովհաննիսյանը Սևանա լճի ավազանի բնական պաշարների վերականգնման, պահպանման և վերարտադրման ՀՀ Կառավարական հանձնաժողովի գիտական գծով փոխնախագահն էր, ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի անդամ, ատենախոսությունների պաշտպանության գծով մասնագիտացված երկու խորհուրդների անդամ, «Էկոլոգիա» մասնագիտությամբ՝ մասնագիտացված խորհրդի նախագահ: Նա եղել է նաև Արգուն և Ամուր գետերի «Սահմանամերձ տարածքների ջրային ռեսուրսների համալիր օգտագործման» սովետա(չինական համատեղ նախագծի Ամուր գետի «հիդրոէկոլոգիա» ենթահանձնաժողովի նախագահը: Պրոֆեսոր Հովհաննիսյանը մի շարք պարբերականների, այդ թվում նաև «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբագրական կոլեգիայի անդամ էր:

Ռաֆայել Հովհաննիսյանը լայն պրոֆիլի հետազոտող էր: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակների մեջ էին մտնում նաև հիդրոէկոլոգիական մոնիթորինգի, քաղցրահամ էկոհամակարգերի զարգացման գործընթացների մաթեմա-տիկական մոդելավորման և կանխագուշակման, փորձարարական էկոլոգիայի, ջրային կենդանիների ֆիզիոլոգիայի հետ կապված բազմաբնույթ հարցեր:

Պրոֆեսոր Հովհաննիսյանը պարգևատրվել է Գիտությունների Ազգային Ակադեմիայի վաստակագրերով, Համամիութենական հիդրոկենսաբանական ընկերության, Սևանի քաղաքային և գործադիր խորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մարդը եւ բնությունը» հանձնաժողովի պատվոգրերով և այլն:

Ռաֆայել Հովսեփի Հովհաննիսյանի՝ անվանի գիտնականի, հայրենասեր քաղաքացու, հրաշալի մարդու, մանկավարժի ու անզուգական ընկերոջ հիշատակը հավերժ կապրի նրան ճանաչողների սրտերում:

«Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբագրություն